

ՊԱՏՄԱԿՐՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՂ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐՈՎՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Արովյանը հանդես եկավ մի ժամանակաշրջանում, երբ աշխարհի ժողովրդական հոծ զանգվածները արթնանում էին միջնադարյան թմրությունից, երբ ժողովուրդները ֆեոդալական կարգերից շրջադարձ էին կատարում ազգային, սոցիալ-տնտեսական կյանքի կազմակերպման բնագավառում, երբ բուրժուա-դեմոկրատական սկզբունքները ճանապարհ էին հարթում, մասնավորապես, ճնշված ազգությունների քաղաքական ազատագրման և մշակութային զարթոնքի առաջ:

Հնկնելով 1830—32 թթ. Եվրոպայում բռնկած հեղափոխության մթնոլորտը, ուր պատմության և ազգության շուրջը տեղի ունեցող ուսանողական վեճերը արտացոլում էին անտեսանելի ճանապարհներով Դորպատ թափանցած և այնտեղ խաչաձևող դեմոկրատական գաղափարներ, Արովյանը կարճ ժամանակամիջոցում իրեն միանգամայն պատրաստ զգաց ևվրոպական լուսավորությունը հայրենիք տեղափոխելու և իր համառ ջանքերի զնով այն իրականացնելու համար: «Ուղղեալ առ դրունս Եւրոպիոյ, զգալով այժմ հասանել ամենայն, փափագանց իմոց,— գրել է նա 1834 թ. սեպտեմբերին իր օրագրում,— այժմ մերկ ճշմարտութիւնն ներկայացաւ առաջի իմ, ոչ երազել, այլ ջանիք և արիւթեամբ վաստակիլ՝ զոր ցանկայիս»:

Եվրոպական մի շարք երկրներում հաղթանակած կապիտալիզմը հասարակության արտադրողական ուժերի աննախընթաց վերելքի հետ միաժամանակ կյանքի էր կոչել նաև նոր ու հեղափոխիչ շատ գաղափարներ: Ֆեոդալիզմի միակ գաղափարախոսության՝ կրոնական դոգմաների փոխարեն այն առաջ էր քաշել մարդկային բանակաւնության սկզբունքը, իսկ դասային կաշկանդվածության փոխարեն՝ ժողովուրդների ազատությունն ու անկախությունը հրահրող ֆրանսիական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ռազատություն, հավասարություն և եղբայրություն» սկզբունքները: Ֆեոդալական կարգերում ապրող ժողովուրդներին այս բոլորը հանգեցնում էր միապետական բռնատիրությունների խորտակման և քաղաքական ազատությունների հռչակման գաղափարին:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո կենտրոնական և արևելյան Եվրոպայում ծավալված նապոլեոնյան պատերազմները հայրենասիրության և ազգային ինքնագիտակցության վերելքի խթան հանդիսացան: Պատահական չէր, անշուշտ, նապոլեոնի պարտությունից անմիջապես հետո Գերմանիայում, մանավանդ ուսանողության մեջ, հանուն ամբողջ Գերմանիայի միավորման առաջացած ուժեղ շարժումը: Հայրենասիրության և ազգային ինքնագիտակցության վերելքը նկատելի էր գաղափարախոսության բոլոր բնագավառներում, առավել ևս պատմության, գրականության և փիլիսոփայության մեջ: Ինչպես գաղափարական պայքարի մյուս, այնպես էլ պատմագիտության բնագավառում բուրժուազիան առաջ էր քաշել իր գաղափարախոսներին (Ֆրանսիայում՝ Ա. Թյերրը, Օ. Թյերին, Ֆ. Գիղոն, Ֆ. Մինյեն, Միշլեն, Գերմանիայում՝ Բ. Գ. Նեբուրը, Ֆ. Է. Շլոսսերը և այլն), որոնք պատմության մեջ ամենից առաջ փնտրեցին ու գտան իրենց քաղաքական համոզմունքների հիմքերը և նշմարեցին այն զենքը, որով հանուն քաղաքական ազատության կարելի էր պայքարել հետադիմության և հնի վերականգնման դեմ: Ինքնուրույն առաջադիմական քննադատությունը պայքարի առաջին դիրքերն է մղում պատմականության գաղափարը: Ժողովրդայնության հռչակումը որպես զեղարվեստական ստեղծագործության որոշիչ մոմենտի և ժողովրդայնության պլանում պատմության վերաիմաստավորումը ֆեոդալիզմի դեմ պայքարում բուրժուական դեմոկրատիան դարձնում է գաղափարական ինքնատիպ զենք: Ինչպես ֆրանսիական ու գերմանական, այնպես էլ ռուս դեմոկրատական հասարակության մեջ այդ ժամանակ կրթող հետաքրքրություն է հանդես գալիս դեպի պատմությունը: Պատմական թեմաներով գրված Վալտեր-Սկոտի վեպերը այդ երկրներում ապշեցուցիչ հաջողություններ են ձևառ բերում: Պատմությունը, Թյերրի վկայությամբ, ֆրանսիացիների հա-

1 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 300: Այսուհետև ԽԱ, ԵԼԺ:

մար դառնում է «ազգային գործ»<sup>2</sup>։ «Պատմությունը,— գրել է Բելինսկին,— դա մեր ժամանակների գիտությունն է, և այդ պատճառով նոր գիտություն է։ Չնայած դրան, նա արդեն հասցրել է մամանակի տիրապետող գիտություն և դարի ալֆան ու օմեգան դառնալու»<sup>3</sup>։

Հասունացող ազգերի ազգային գիտակցությունը հիմնավորող պատմական գիտության այսպիսի ծաղկման պայմաններում Աբովյանը չէր կարող նրա կողքով անտարբեր անցնել։ Գորպատից շրած նրա բոլոր նամակները ցույց են տալիս, որ Աբովյանը առանձնահատուկ մեծ ուշադրություն է ցուցաբերել դեպի պատմության առարկան ու թեև դրա պատճառով հանդիմանության արժանացել ազգի հեղինակավոր ուսումնականներից, բայց մինչև ուսումնառության ավարտը չի թուլացրել իր գիտական հարցասիրությունը, չկամենալով ականջ դնել նրանց, ովքեր կամենում էին զամել նրա միտքը Չամչյանի պատմագրության տրադիցիոն մակարդակին<sup>4</sup>։ Աբովյանի կողմից պատմության ուսումնասիրումը, սակայն, զուտ հետաքրքրության բավարարման բնույթ չի կրել։ Նա ձգտել է եվրոպական այդ առաջադիմությունը ևս տեղափոխել իր այրենիքը։

Հայ կյանքի «եվրոպականացման» ձգտող Աբովյանը, սակայն, ամենայն եվրոպականը չլր, որ ընդունում և սրբացնում էր «Որքան էլ զրավիչ լինեիր ինձ համար եվրոպական, այնուամենայնիվ, ինձ համար անկարելի էր ամեն ինչ ընդունել և լավ համարել»<sup>5</sup>,— գրել է նա։ Նա տեսել ու մերկացրել է նոր՝ կապիտալիստական հասարակարգի անխուսափելի ծնունդ հանդիսացող գաղութատիրությունն ու սրան արդարացնող ռասայական տեսությունը, որ Աբովյանի ուսումնառության տարիներին եվրոպայում լայն տարածում գտած երևույթ էր։

Արտադուրելով գաղութարար պետությունների նվաճողական քաղաքականությունն, այդ տեսության կողմնակից որոշ պատմաբաններ, միսիոներներ ու ճանապարհորդներ ասիական ժողովուրդներին շափազանց աննպաստ ձևով էին ներկայացնում եվրոպական հասարակությանը։

Նույն երևույթը նկատելի էր նաև գաղութատիրության ուղին բռնած ցարական Ռուսաստանում։ Այստեղ նոր առաջացող բուրժուա-ազնվականական ուղղության հետ միասին, ցարական պաշտոնական պատմագրությունը արտացոլում էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը և հիմնավորում կառավարության հպատակ ժողովուրդներին կլանելու և համահարթելու մեծապետական ծրագրերը։ Նրանց բոլորի գլխավոր հարցը ոչ ռուս ժողովուրդների ազգային դիմազրկման խնդիրն է դառնում։ Հետ որում գործն այնպես էր ներկայացվում, որ իբր այդ ժողովուրդները ինքնուրույն պատմություն չեն ունեցել և միայն Ռուսաստանին միացվելուց հետո է սկսվել նրանց լուսավորությունը, քաղաքակրթությունը։ Նրանք փաստորեն ժխտում էին կայսրության մեջ մտնող մյուս ժողովուրդների պատմական ինքնուրույն զարգացումը։

Հայերի նկատմամբ այդ քաղաքականությունը արտահայտվում էր հայոց լեզվի և կրոնի դեմ սկսված հալածանքով, մի հանգամանք, որի դեմ բողոքեց անգամ նոր կաթողիկոսը՝ Ներսես Աղաթանգյանը Պետերբուրգում եղած ժամանակ (1843 թ.) պահանջելով, որ ռուսաց զրքերից և հատկապես դասազրքերից հանեն հայոց եկեղեցու դեմ ծանրալուր մեղադրանքները<sup>6</sup>։

Աբովյանի ազգային արժանապատվությունը մեծապես վիրավորվում էր այն բանից, որ ցարական կառավարությունը սատարում էր իր զենքի հաղթանակին մեծապես նպաստած հայերին հալածող եվրոպական հավատորսներին։

Հավատորսության միջոցով հպատակ ժողովուրդներին ստրկացնելու գործում ցարական կառավարության և եվրոպացի միսիոներների լոբյայն դաշինքը՝ Աբովյանը նկատել էր տակավին իր ուսանողության տարիներին։ Նրան վրդովել էր մանավանդ հայ ժողովրդի հասցին

2 В. Бузескул, Всеобщая история и ее представители в России в XIX и начала XX вв., 1929, էջ 51։

3 В. Г. Беллинский, Полное собрание сочинений, Մ., 1926, հ. 12, էջ 453։

4 Իմանալով, որ Գորպատ մեկնելուց ի վեր Աբովյանը պատմության ուսումնասիրությամբ էր զբաղված և այն էլ այն ժամանակ, երբ ավարտվում էր նրա ուսումնառության սկզբնապես նշանակված ժամկետը, Հաղարյան ճեմարանի դասատու Միքայել վարդապետ Սալլանյանը Մոսկվայից նրան գրել է. «Ինձ երևի, թէ չունիս դեռ դու վասն անձինդ դորոշ ինչ նպատակ... վասն որոյ և ի սնտիս զբաղեալ ես յուսանիլ զպատմութիւն... Զիցէ՞ քո ընթերցեալ զպատմութիւն Չամչեանն... միթէ ո՞չ իմացար յընթեռնուդ, կամ դասատուի կարօտեցա՞ր»։ Դիվան հ. Աբովյանի, հ. 2, էջ 110։

5 Նույն տեղում, հ. 10, էջ 176։

6 SL'ս Օրմանյան, Աղդապատում, հ. 3, էջ 3781։

ներյուրանքներով լի միսիոներ Ավդուստ Դիտրիխի աշխատության 1831 թ. Պետերբուրգում լույս տեսնելու փաստը: Այդ աշխատության դեմ նա ժամանակին մերկացնող բողոք հայտնեց:

Խոսքը իբր միսիոներներին ուղղելով Աբովյանը գրում էր. «Եվրոպայում նրանք այդ (հայերին գրգռարտել—Վ. Ղ.) էին կարող անել, որովհետև այնտեղ մարդիկ նրանց ավելի լավ են ճանաչում և դատում, ոչ էլ Վրաստանում, քանի որ վրացիները ոուսական եկեղեցուն են հարում»<sup>7</sup>: Այսինքն՝ Ռուսաստանում հայերը գրգռարտվում են (միևնույն է տվյալ դեպքում, թե ում կողմից) միմիայն այն պատճառով, որ ոուսական եկեղեցուն չեն հարում, հավատի հարցում դիմադրում են կառավարության ոուսականացման քաղաքականությանը: Յարիզմի այս հայաճալած քաղաքականությունը և ոչ թե ազգ Վասկացողության հատկանիշները նկատի ունեն Աբովյանը, երբ «Վերք»-ի հռչակավոր առաջաբանում վառված սրտով գրի էր առնում, թե «մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը. թե սրանց էլ կորցնենք (ասել է ինքնուրույն, անկախ պետականություն ունենալու կամ կազմելու հույսը արդեն կորցրել ենք, հերթը սրանց է հասել—Վ. Ղ.), վայն էկել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեստսի նման...»<sup>8</sup> և այլն:

Աբովյանը քաղաքական նկատառումներով բացահայտորեն չի տվել ոչ միայն կառավարության տեսանկյունից անբարեհույս գործիչների, այլ նաև պաշտոնական ռազավարախոսության ջատագով պատմաբանների անունները, որոնց, սակայն, նա քննադատել է «օտարերկրացիներ» և «Եվրոպացիներ» անվան տակ: «Վերք»-ի մեջ, զանգատվելով միմիայն «իրենց ազգին առաջ քաշողս եվրոպացի պատմաբաններից, Աբովյանը անշուշտ ցարական պաշտոնական պատմաբաններին նկատի ունեն, որովհետև ոուս-սլավոնական պատերազմը և ոուսական զենքի հաղթանակի գործում հայերի մատուցած ծառայությունների վերհանումը սրանց, և ոչ թե արևմտաեվրոպական պատմաբաններին վերաբերող խնդիր էր: Կամ Ռուսաստանում տպագրվելիք իր «Ուղևորություն դեպի Անիի ավերակները»<sup>9</sup> երկում, երբ թաթար-մոնղոլներին նա Ռուսաստանի դաժան ավերիչներ էր անվանում, Աբովյանը, անշուշտ, համոզված էր, որ մայրաքաղաքի ոուս ընթերցողներին հասկանալի էր, թե ինքը ում ունեն աչքի առաջ: Դրանով նա հակադրվում էր ցարական պաշտոնական պատմագրության ամենահայտնի ներկայացուցիչ Մ. Պ. Պոգոդինին:

Միապետության պաշտպանության միտումով վերջինս գտնում էր, որ թաթար-մոնղոլական իշխանությունը բարիք էր Ռուսաստանի համար, քանի որ միապետական իշխանության ուժեղացումը և ոուսական միասնական պետության ստեղծումը իբր նրանց տիրապետության հետեւանքն էր:

«Վերք»-ի հռչակավոր առաջաբանում նա գրում էր, որ իրեն գիշեր-ցերեկ այրող ցավը հայ ժողովրդի կորցրած փառքի ու մեծության, համաշխարհային պատմության մեջ նրա կատարած հրաշքի (իմա՝ ազգապահպանության), նրա արած քաջաշորթությունների վերհանման միտքն է<sup>10</sup>: Աբովյանի նպատակն է եղել հակառակ պատմության կեղծարարների, որոնք պարզևի ակնկալությամբ, կեղծավորաբար, թագավորություն ունեցող ազգերին էին ծառայում, ցույց տալ հայոց հերոսական անցյալը, ապացուցել, որ նա ևս ունեցել է իր ինքնուրույն ազգային պատմությունը, ուստի համաշխարհային պատմության մեջ նա ևս միանգամայն արժանի է իր պատշաճ տեղը գրավելու: «Թե մեկ երկիր պատմությունը կլասիչեսկի է անվանում, այսինքն երևելի, արժանահիշատակ, էնդուր համար՝ որ մեծ մեծ բաներ ա անց կացել, էլ ինչ տեղ աշխարհումս էնքան

7 ԽԱ, ԵԼԺ, հ. 10, էջ 310:

8 Նույն տեղում, հ. 3, էջ 5:

9 Սույն ենթագրության համար իմք են հանդիսանում, ինչպես երկի ոուսերենով գրված լինելը, համաշխարհային պատմությունից ու գրականությունից մեջբերված և միմիայն բարձր մակարդակի ընթերցողներին մատչելի բազմաթիվ օրինակների վկայակոչման փաստերը և մայրաքաղաքներում լայն ծանոթություններ ունեցող Գ. Ախվերդյանի թղթերից երկի ձեռագրի հայտնաբերման հանգամանքը, այնպես էլ Խ. Յրենին գրած Աբովյանի նամակը: Խոսելով իր գրական հողվածների մասին նա գրել է. «Առայժմ ունեմ Անիի նկարագրությունը, սակայն, դժբախտաբար, ոուսերեն, որովհետև մասամբ ուզում եմ տպագրել Ռիֆլիս լրագրում»: ԽԱ, ԵԼԺ, հ. 10, էջ 294: «Անիի նկարագրությունը» «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» երկն էլ «Ռիֆլիսը» «Կովկաս» լրագիրն է, տես նույն տեղում, էջ 402, ծանոթագրություն 5: Աբովյանի սույն վկայությունը ցույց է տալիս, որ նա մտադիր է եղել, ոչ թե երկր ամբողջությամբ հրապարակել Անդրկովկասում, այլ մասամբ, մեր կարծիքով, միայն նրա ինքնուրույն հողվածը, ուր նա եզակիորեն դիմում է «Կովկաս» թերթի ընթերցողներին: Տե՛ս ԽԱ, ԵԼԺ, հ. 7, էջ 186:

10 Տե՛ս ԽԱ, ԵԼԺ, հ. 3, էջ 2—3:

երևելի բաներ են անց կացել, որքան Հայաստան... Թե սիրելի որդիքը պատմության նրանք են՝ որ շատ քաջություն արին, ոչինչ ազգ ուրեմն էնքան բրաբրին (պարզև, մրցանակ—Վ. Ղ.), էնքան պսակ պետք է շտանսւր, որքան Հայք, բայց ի՞նչ անեմ, լեզուս կարճ ա, ձեռքս բարակ... անտեր ազգին ո՛վ (է) մտիկ անում, աշխարս զոռովին ա գլուխ վեր բերում...»<sup>11</sup>։

Արուվյանի «Ի՞նչ անեմ՝ լեզուս կարճ ա, ձեռքս բարակ» արտահայտությունը պարզ ցույց է տալիս, որ նրա խոսքը ցարական տիրապետության տակ իր և իր ժողովրդի իրավազուրկ լինելու մասին է։ «Վերք»-ի մի այլ տեղ նա հառաչել է. «Ա՛խ՝ հազար էսպես ցավեր կա սրբ-տումս, ամա բերանս փակում են, շեմ կարում ասել»<sup>12</sup>։ Քաղաքական նույն առումով է Արուվյանը գրել.

«էս ա, որ հիմիկ մեկ խաչապաշտ էլ  
Մեր խեղճ ազգի հետն ընկած ման ա գալիս  
Որ արինը ծծի ու հոգին հանի»<sup>13</sup>։

Ցարիզմի դեմ Արուվյանի բողոքն ավելի զորեղ և ավելի հստակ է մանավանդ այնտեղ, ուր չբել է.

«...Հայի սրտի տակին,  
Շատ շնորհք, զորություն, շատ լավություն կա  
Բայց քարը վերցնել ու սիրտը բանալու տեղ  
Խցկում են բերանը, որ էսքան բարին  
Ջնջվի, փշանա, Հայ անուն չըլի»<sup>14</sup>։

Արուվյանն այստեղ նկատի ուներ ցարական կառավարության 1840 թ. ապրիլի 10-ի օրենքը<sup>15</sup>, որով վերացվեց Հայկական մարզը՝ հայ ժողովրդի ակնկալած ինքնուրույն պետականության այդ ծաղրանկարը։

Քաղաքական նույն նպատակասլացությունն է գրդել Արուվյանին՝ շրջանցելու իր նախասիրած Վարդանանց պատերազմների կամ Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանները և իր երկի համար թեմա ընտրել իր ապրած ժամանակաշրջանը։ Արուվյանը այդպես է վարվել, որովհետև հայոց պատմության խոր անցյալից նյութ վերցնելով նա հնարավորություն չէր ունենա ցույց տալ ուսանկան գեների հաղթանակի գործում հայերի մատուցած ծառայությունները, նրանց հիշեցնել, որ հայ ժողովուրդը իր հույսերի մեջ խաբված է, որովհետև նրա այսօրը այն չէ, ինչ նա ակնկալում էր պատերազմի օրերին<sup>16</sup>։

«Ո՞ր ազգը, ո՞ր մարդը պակասություններ և թուլություններ չունի, որ զուտ մարդկայնությունից ելնելով՝ ավելի լավ է անտեսել, եթե չես կարող բարեմտորեն ուղղել»<sup>17</sup>,—գրել է Արուվյանը։ Մա պատմության նկատմամբ գիտական ճշմարիտ մոտեցում է, որովհետև, եթե որպես գիտություն՝ պատմության նպատակը տվյալ ժողովրդի առաջադիմությանը նպաստելն է, ապա նա պետք է վերհանի ոչ թե դրան խանգարող ժողովրդի սովորոտ, երկրորդական գծերը, այլ նրա ընդհանրությունը բնութագրող ազգային հատկանիշները։

Տակավին Դորպատում պատմության կեղծարարների դեմ պայքարի ելնելով, Արուվյանը գրել է. «Եթե նրանք ուզում էին բարբերի և պատմության մասին գրել, ապա պետք է օգնության կանչեին իրենց բանականությունը և ոչ թե իրենց բարեպաշտ լեզուն։ Պատմությունը պահանջում է հավատարմություն, անկանխակալություն, անաշտություն, այլապես պատմագիրը փերեզակ կդառնա, իսկ նրա երկն էլ փերեզակի կապոց... Ես կոչ եմ անում ամեն մի ողջամիտ մարդասերի, մարդաճանաչի, դատավոր լինելու ինձ և իմ ազգի վրա»<sup>18</sup>։

11 ԽԱ, ԵԼԺ, հ. 3, էջ 305։

12 Նույն տեղում, էջ 171—247։

13 Նույն տեղում, հ. 2, էջ 85։

14 Նույն տեղում, հ. 2, էջ 61։

15 Որից, ի դեպ, դժգոհեցին հայ ժողովրդի սոցիալական բոլոր խավերը և շփոթության մեջ քցեցին ցարական կառավարությանը։

16 Այս մասին տե՛ս մեր «Խ. Արուվյանի «Վերք Հայաստան»-ի զաղափարական բովանդակության մի բանի նարցեր» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 139—154։

17 ԽԱ, ԵԼԺ, հ. 10, էջ 310։

18 Նույն տեղում, հ. 10, էջ 310։

Ելնելով իր իսկ առաջադրած օրյեկտիվության սկզբունքից, Արովյանը ցույց է տվել, որ հայ ժողովրդին հատուկ է եղել ոչ թե առևտրական, այլ հերոսական ու գործունյա այն ոգին, «որոնք խաղաղության օրերին աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ՝ արիասիրտ և համբերատար, մտքի և բարոյական ուժերի զարգացման մեջ՝ ճոխ և քնքուշ, ազգային սրբությունների անձնական խելությունը պահպանելիս՝ հպարտ և՛ անընկճելի»<sup>19</sup>, բոլոր սիրանքների ղեկավարում առաջինը լինելու մեջ՝ ձգտող և այլն:

Գաղութարարական նպատակներ հետապնդող պատմության կեղծարարներին մերկացնելու համար Արովյանը պատմության խորքից վեր է հանել ամերիկյան բնիկների և աֆրիկյան նեգրերի նկատմամբ բվրոպական պետությունների կատարած վայրագ գործողությունները: Հանրահայտ է «Ոսկու թողից» գծված բվրոպական գաղութարարների այլանդակ բարբերի նրա մերկացումները, որից հետո Արովյանը զայրալից բացականչում է. «էս էլ քո լուսավոր բվրոպացին»<sup>20</sup>:

Ժամանակակից լատին մատենագիրներից քաղած նյութերի հիման վրա նա մերկացրել է «Քրիստոսի փոխանորդ» կոչված պապերի բոլոր զեղծումներն ու սուտ հնարքները՝ խաչակրաց արշավանքները, ինկվիզիցիան, հավատաբնույթունը, ասպետականությունը և արեղայական անթիվ միարանությունները, թողության թղթերն ու կոնդակները, սուրբ գրքի ընթերցման արգելակումը և այլն՝ բոլորը հնարված ավելի շուտ ժողովրդին ստրկացնելու և հարստությունը դիզելու, քան քրիստոնեական ուսմունքի տարածման համար: Այդ բոլորին նա հակադրել է Արևելքի հոգևոր կենտրոն էջմիածինը և ցույց տվել, որ պատմության մեջ խաղացած իր դերով վերջինս ավելի բարձր է կանգնած եղել, քանի որ իր իշխանությունը տարածելու համար նա Հոռմի նման միլիոնավոր մարդկանց կյանք չի խլել: Մինչդեռ «Պատմագիրքը ըստ մեծի մասի բվրոպացի ըլելով» փաստորեն միջնադարյան Եվրոպայի խավարամտությունը խորհրդանշող Հոռմը «արդի բվրոպացիների արվեստի, սրենքների և՛ լուսավորության աղբյուրի օրթան» են ճանաչում, իսկ հայերին «ներկայացնում էին և ներկայացնում են այնպիսի ձևով, ինչպիսին աշխարհիս երեսին ոչ մի ազգ ոչ տեսել և ոչ էլ լսել է»<sup>21</sup>:

Պատասխանելով հայ ժողովրդին նաև հավատի հարցում զրպարտողներին, Արովյանը գրել է. «Երբ նրանք դեռ հեթանոսներ, բարբարոսներ էին, հայի բարեպաշտ, կենդանի հոգին յուրացրել էր քրիստոնեական կրոնը և նրա համար իր արյունով թանկ վճարել»<sup>22</sup>:

Սակայն հայ ժողովրդին զրպարտելու համար Արովյանը ոչ այնքան օտարներին, որքան հայ կղերամիտ պատմաբաններին է մեղադրել ու քննադատել: «Մեղավորը մենք ենք,— գրել է նա «Վերք»-ում,— որ մեր ազգի արածները չգրեցինք, քնեցինք, ուրիշ ազգեր էլ չիմացան, ու մեր անօրինակ Հսկայից անվանչր, որ ամեն գեղում, ամեն պուճախում հարյուրավորը կային ու կան, էնպես անհայտ մնացին»<sup>23</sup>:

Լուսավորության այդ դարում, երբ բուրժուականացող բվրոպական ժողովուրդները իրենց կապերը ավատականության հետ խզելով ձևավորվում էին որպես ազգ և բանականության վրա՝ «ենված պատմաբանադատական մեթոդով ազգային պատմություն ստեղծում»՝ ժողովրդի մտավորը իրենց սեփականած հայ հոգևոր հայրերը ավատականություն էին քարոզում և միջնադարյան սխուլաստիկա ավանդում: Ահա թե ինչու Արովյանը իր զայրույթը հայ հոգևորականության վրա էր թափում:

Արովյանը հատկապես կրակի տակ է առել հայ պատմագրության մեջ պաշտոնական կարծիքի ուժ ստացած Չամչյան-Ինճիճյան կղերամիտ կոնցեպցիան, որոնց գրքերի քննադատությունը հայ-լուսավորչական եկեղեցու սպասավորների կողմից սրբապղծություն էր համարվում: Վերջին հանգամանքն է եղել պատճառը, որ Արովյանը, բացի մի ղեկավարից<sup>24</sup>, Չամչյանին ու Ինճիճյանին քննադատել է առանց նրանց անունները տալու: Անշուշտ Չամչյան-Ինճիճյան կղերամիտներին նկատի ունենալով, երբ գրում էր. «Չամից շատ բարձր կարծիք ունենալով իրենց

19 Նույն տեղում, հ. 7, էջ 199:

20 Նույն տեղում, հ. 5, էջ 258:

21 Նույն տեղում, հ. 7, էջ 180:

22 Նույն տեղում, հ. 1, էջ 310:

23 Նույն տեղում, հ. 3, էջ 305:

24 Չամչյանին ու Ինճիճյանին նա բացահայտորեն, այն էլ չափազանց մեղմ ձևով, քննադատել է իր «Քրդեր» ուսումնասիրության մեջ, ուր գրել է. «այն տեղեկությունները, որ մեզ տալիս են հայ պատմաբանները, հատկապես Չամչյանին, իր ընդարձակ, անշուշտ արժեքա-

դասի առավելությունների մասին՝ հողերականները դրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ: Նրանց ամբողջ հողերը գործունեության ուղևու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը, նույնիսկ պատմության գրքերում... նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության»<sup>25</sup>:

Արուվյանը դրվատանքով է արտահայտվել «մեծերախտն Մխիթար արքայի» մասին և տարրերություն էր գնում նրա ու արդի մխիթարյանների ունեցած հնարավորությունների միջև: Նա չէր կարող աչք փակել այն հանդամանքի առջև, որ իրենց դավանարանական և աստվածաբանական կոնցեպցիայով գրած պատմագրիտական երկերով արդի մխիթարյանները մեծապես վրնասում էին հայ ժողովրդի ազգային շահերին, թմբեցնելով նրա մարտական ոգին և ազատարաղձ միտքը: Ուշագրավ զուգահեռությամբ Մխիթարին մյուս մխիթարյաններից տարրերանշող նույն վերաբերմունքն էր ցույց տալիս հետագայում Նալբանդյանը:

«Մխիթարյաններին քննադատում էր տակավին Արուվյանը,—գրել է Աշ. Հովհաննիսյանը:— նրանց ուներ, անշուշտ, նկատի, երբ «Պարսպ վախտի խաղալիք»-ում զրում էր:

Մեկը ունքերը ամպի պես կիտած՝  
Աշխարքի բհամ գալն էր եղ պատմում,  
Մեկը քիթ ու նոթ քացախացրած՝  
Լեզվի դուս գալն էր մեկնում, բաց անում:

Գարձյալ նրանց նկատի ուներ Արուվյանը, երբ ծաղրում էր այն գիտունին, որը մտահոգված էր՝

Թե աշխարքիս վերջն ի՞նչ պետք է ըլի,  
էլ չէր հարցնում թե ներկա վախտի  
Բանն ինչպես կըլի, ու չէր էլ գիտում»<sup>26</sup>:

Մխիթարյանների գործունեությանը Արուվյանը մոտենում ու քննադատում էր հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող արդիական խնդիրների տեսանկյունից: Նա գտնում էր, որ այժմ հայ ժողովրդին պետք են ոչ թե աշխարհի ստեղծագործության կամ հայոց լեզվի ծագման բիրտիական բացատրություններ, կրոնական առասպելներ ու սրբերի վարքեր, դրանք նա շատ է լսել, այլ արդի սոցիալ-քաղաքական ծանր վիճակից դուրս գալու ուղիներ: «Ով շգիտի՝ թե երկնքումն Աստված կա, մեզ համար դատաստան: Ամա պետք է իմանանք էլ՝ թե երկրումը ի՞նչ պետք է անենք, որ էս դատաստանի տակը շընկենք» է՝<sup>27</sup>,—բունակալության լծի տակից գոչում է «Վերք»-ի գյուղացին: Իսկ այդ նշանակում էր, որ դարեր շարունակ քարոզներ լսելուց ու աղոթքներ կրկնելուց ժողովրդի համբերության բաժակն արդեն լցվել է, որ ժողովրդի փրկությունը ոչ թե միստիցիզմի և բարեպաշտության մեջ է, այլ լուսավորության, քաղաքակրթության, նրանց գիտակցության մեջ աշխարհը վերափոխելու զգացմունքներ սերմանելու և ոչ թե եկեղեցու պատգամների պատվաստման մեջ: Իսկ ո՞վ պետք է այդ բոլորն անի: Արուվյանի համոզմամբ դարի ոգով բրված աշխարհիկ պատմությունը, գրականությունը, դպրոցը: «Ախր մեր ազգը, որ խեղճ ա մնացել,—բողոքում է ժողովրդի տրամադրություններն արտահայտող հայ շինականը,—թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա՝ որ մեզ մեկ ասող չի ըլում՝ թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ինչի՞ համար ենք եկել աշխար, բոո գալիս ենք, բոո գնում»<sup>28</sup>: Դրանով Արուվյանը ցույց է տվել, որ անգետ ժողովուրդն անգամ, արդեն դիտակցում է լուսավորության պահանջը, որ ներկա դարում նա այլևս չի հաշտվում իր նախկին ապրելակերպին, այլ ցանկանում է, որ իր աչքերն էլ բացվեն, ինքն էլ տեսնի: «Ուրիշ ազգեր՝ իրանց միջումը մեկ երևելի մարդ որ դուս ա դալիս, կամ քաջ ա ըլում... կամ գիտուն... ազգի համար մեկ պիտանի բան ա եղ քցում,—գրել է Արուվյանը,—կենդանի ժամանակը նրան պատ-

վոր, սակայն առանց որևէ կրիտիկայի գրված Հայոց պատմության... Ի ն ճ ի ճ յ ա ն ը, իր ՚ի ն ու նոր Հայաստանի նկարագրությունների... (մեջ), անվստահելի աղբյուրներից են քաղված, և, հետևաբար ենթակա են որոշ կասկածների», ԽԱ, ԵԼԺ, հ. 8, էջ 243:

25 Նույն տեղում, հ. 5, էջ 46:

26 Ա շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, էջ 121—122:

27 ԽԱ, ԵԼԺ, հ. 3, էջ 25:

28 ԽԱ, ԵԼԺ, հ. 3, էջ 25:

վում են... մեռնելուցը եղը՝ նրան զովում, պատմությունը գրում... որ ջահել մարդիկ, երիտա-  
 «արդք տեսնելիս, իրանք էլ ցանկանան նրա օրինակին հետևել...: Բայց ախ՛ ո՛ւր մեր ազգի  
 միջի եղած երևելի անձանց... պատմությունը կամ զովասանությունը, թե կային էլ... Լնպես ա  
 գրած կամ շինած, որ միջումը էն կրակը չի կա, որ կարդալիս մարդի սիրտ վառի»<sup>29</sup>,

Պատմաբանից նա պահանջում էր պատմագիտական այնպիսի երկ, որը հայրենասիրության  
 ջերմ շնչով և արիության ոգով կարողանար ընթերցողների սիրտը վառել, նրանց սխրանքների  
 ու հերոսության մղել և ոչ թե կույր քարոզներով նրանց միտքը թմրեցնել: Աշխարհաբարի հա-  
 մար Աբովյանի կողմից բորբոքած և համառ ձևով տարած պայքարը պատմության և ընդհան-  
 րապես գաղափարական միջոցների աշխարհականացմանն էր հետամուտ և ոչ թե զուտ լեզվական  
 վեճի բնույթ ուներ: Դրա համար էր նա գանգատվում, որ այնքան փառավոր անցյալ ունեցող  
 հայ ժողովրդի մասին մեզնից ոչ որ «մեկ սրտի բան» չի գրի առել, որ կապ ունենա ժողովրդի  
 ու ժամանակի ոգու հետ. «ինչ կա եկեղեցու վրա յա, Աստծու ու սրբերի»:

Աբովյանը շատ լավ է գիտակցել պատմության որպես գաղափարական զենքի նշանակու-  
 թյունը: Այդ զենքը նա համեմատել է թրի հետ և պատվիրել, որ միշտ սուր պահեն այն: «Թուրը  
 որ վեր քցած թողաս (իմա՝ շօզտագործես—Վ. Ղ.), հայտնի բան է, որ կծանգոտի,—գրել է  
 նա:—...Միթե մարդի սիրտն էլ Լսպես չի՞: Քանի մարդ անտեր մնա, միտքը խավար, աչքը  
 խուփ, ոչ օրինակ տեսնի, ոչ իր ազգի պատմությունը կարդա կամ լսի, էնքան կբրդանա (բիրտ,  
 կոպիտ կլինի—Վ. Ղ.), սիրտը կհոլանա, ամեն բանից կհեռանա»<sup>30</sup>.

Ավելին, նա հասկանում էր նաև պատմության՝ հասարակության մի որոշ խավին ծառայելու  
 դերը: «Ի՛նչ ոչ պատմի զ՛նքքիւլիայ Յունաց, զՌոստոմէ Պարսից, զՄահմէդէ և այլն,—գրել է  
 Աբովյանը:—Նա և զնորա նոր թագաւորաց և զարանց մեծաց՝ որք ամենևին չեն ճշմարիտ: Եւ ի  
 լուսաւորեալ դարս Եւրոպիոյ, եթէ Գերմանիայ այնքան լի է շափազանցութեամբ զՖրիդրիկէ  
 մեծէ, Անգլիայ՝ զԱլբերդէ, Ռուսաստան՝ զՊետրոսէ մեծէ, զինչ լինիւր ապա... մանավանդ  
 յԱսիայ, ուր ածխոյժ և հրային երևակայութիւն բնակչաց զսիրելիսն յերկինս հանեալ, զատելիսն  
 յանդունգս դժոխաց իջուցանէ»<sup>31</sup>: Աբովյանը գիտակցում էր, որ բոլոր ժամանակներում իշխող  
 վերնախավի շահերն արտահայտող ուստի և տիրապետող մտայնությունը իր խոր կնիքն է  
 դնում ժամանակաշրջանի պատմագիրների վրա, այդ պատճառով էլ սյատմական իսկությունը  
 վերականգնելու համար նա պահանջում էր քննադատաբար վերաբերվել պաշտոնական դիր-  
 քերից զրված սկզբնաղբյուրներին: Մի առիթով նա մեջ է բերել Հարք գավառի թոնդրակյան  
 շարժման ղեկավար Հակոբ եպիսկոպոսի մասին Ա. Լաստիվերտցու մեղադրանքները և ծանո-  
 թագրության մեջ ավելացրել. «Իհարկե (Լաստիվերտցին—Վ. Ղ.) որպես ուղղափառ, չէր էլ  
 կարող այլ կերպ խոսել»: Դրա համար է նա մատաղ սերնդին պատվիրել. «վասն որո խրատ լիցի  
 ձեզ որքան և ախորժ և քաղցր երևեսցի յաշս ձեր հրաշապատում անց հնոյ ժամանակի, մի հա-  
 մարեր իսկ և իսկ ճշմարիտ և հաւաստի գամենայն: Տարակուսելն է նմանապես իմաստութիւն,  
 և տարակուսելով բազում ինչ իմանամք զորս այլազգ չէր կարելի իմանալ և մնամք անձնագատ  
 ի սնտի և անօգուտ խնդրանաց»<sup>32</sup>:

Աբովյանը կասկածի տակ առավ ոչ միայն տիրապետող մտայնության կողմից սրբագործ-  
 ված գաղափարները, այլ պաշտոնական պատմագրությանը հակադրվեց նաև պատմության իր  
 բմբռնմամբ և ժողովրդի աշխատավոր, արտադրող դասակարգի դիրքերից պատմական անցյալը  
 մեկնաբանելու իր ելակետով: Իր ստեղծագործություններից մեկում խոսելով ժողովուրդներին  
 ամեն տեսակ դժբախտություններ պատճառող պատերազմների մասին, Աբովյանը գրել է. «Եվ  
 որ այդտեղ (իմա՝ պատերազմի ժամանակ—Վ. Ղ.) ժողովրդի աշխատավոր, արտադրող դա-  
 սակարգը ամենից շատ է տուժում, գա փաստ է...»<sup>33</sup>: Ասել է, թե ինչ մնում է հասարակության  
 անարտադրող, շահագործող դասակարգին, պատերազմի ժամանակ անգամ ապահովված է,  
 քանի որ նախանդյանի բռնկումով ասած «նորա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ ան-  
 խոցելի են նաև բռնակալների իշխանության մեջ»:

Իշխող նորտատիրական սիստեմի և այն պահպանելու կոչված նիկոլաևյան գրաքննության  
 դաժան պայմանների նետանքով Աբովյանը իր հրկերում այդ սիստեմը ժխտելու մասին ձևա-

29 Նույն տեղում, հ. 4, էջ 96:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, հ. 5, էջ 327—328:

32 Նույն տեղում, հ. 5, էջ 328:

33 ԽԱ, ԵԼԽԺ, հ. 8, էջ 55:

կերպված բացահայտ խոսք չի ասել: Սակայն նրա ամբողջ ստեղծագործությունն իր էության մեջ, իր հասարակական-քաղաքական հիմնական տենդենցով և տողամեջ արված սուր մերկացումներով ժխտել է անարտադրող դասակարգի շահերն արտահայտող ֆեոդալական ճորտատիրական սիստեմը և այդ սիստեմի ամրապնդմանը կոչված պաշտոնական պատմագրությունը:

Այս բոլորը մեզ բերում են այն հետևություն, որ Արովյանի պատմությանը դիմելու բուն պատճառը եղել է ինչպես եվրոպական աշուու, այնպես էլ, առավել ևս, ցարական ու հայկական պատմագրության մեջ տիրապետող հետադեմ ուղղության կողմնակիցների դեմ պայքարելու անհրաժեշտությունը, որի սոցիալ-քաղաքական իմաստը ինչպես կայսրության բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի վրա ծանրացած ցարական բռնակալության թոթափումն էր և երկրում առաջավոր՝ բուրժուական նոր արտադրահարաբերությունների և բուրժուա-դեմոկրատական զաղափարների հաստատումը: